Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գրիգոր Գրիգորյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ բանկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման հիմնախնդիրների հետազոտությանը:

Բանկային և ֆինանսական ծառայությունների բնագավառում ներկայումս անցում է կատարվում ավանդական բանկային տեխնոլոգիաներից դեպի առավել ժամանակակից մոտեցումներ թե՛ ՀՀ-ում, թե՛ ամբողջ աշխարհում: Այդ փոխակերպումը ենթադրում է տարբեր գործոնների և մոտեցումների վերանայում, հիմնականում ապահովելու համար բանկային ծառայություններ սպառողների պահանջներում ու սպասումները, իսկ մյուս կողմից՝ ապահովելու բանկերի մրցունակությունն ու ֆինանսական կայունությունը:

Քանի որ բանկերի համար էական նշանակություն ունի աճող մրցակցային պայմաններում շուկայում ունենալ որոշակի դիրք, նրանք անմասն չեն կարող մնալ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացումից և նորագույն ֆինանսական տեխնոլոգիաների ներդրումից:

Ֆինտեխը արագ զարգացող ոլորտ է ֆինանսական ծառայությունների և զարգացած տեխնոլոգիաների խաչմերուկում: Այն միաժամանակ տեխնոլոգիական առաջընթացի շարժիչ ուժ է: Այստեղ զուգորդվում են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք մասնագիտական գնահատման ու հետազոտման պահանջ են առաջ բերում:

Հետազոտության թեմայում բարձրացված խնդիրները ուղղված են գնահատելու ՀՀ բանկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացումը և առաջարկություններ մշակելու դրանց բարելավման ուղղությամբ: Այդ խնդիրների վերհանման, լուծման և ՀՀ բանկային համակարգի կայուն զարգացման անհրաժեշտությունն էլ պայմանավորում են թեմայի արդիականությունը և կարևորությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակը, որպես հետազոտության հիմնական նպատակ նշել է՝ հետազոտել ֆինանսական տեխնոլոգիաների դերը բանկային համակարգում, գնահատել ՀՀ-ում դրա զարգացման նախադրյալներն ու վիճակը, նաև, հիմնվելով ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման միջազգային լավագույն փորձի համալիր վերլուծության արդյունքների վրա, վերհանել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման խնդիրներն ու մշակել դրանց լուծմանն ուղղված առանձին ընդհանրական առաջարկություններ:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Հետազոտել ֆինտեխի բովանդակությունը, դերն ու նշանակությունը բանկային համակարգում և տնտեսությունում,
- Ուսումնասիրել ֆինտեխի զարգացման ընթացքը, միտումներն ու մարտահրավերները առանձին երկրներում,
- Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման արդի վիճակը,
- Հետազոտել ՀՀ-ում ֆինտեխի ներդրման և զարգացման նախադրյալները,
- Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման, խորացման և ընդլայնման առանցքային խնդիրները,
- Ներկայացնել ՀՀ-ում ֆինտեխի զարգացման առանձին խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանը միտված առաջարկություններ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և

առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինտեխի էությունը, զարգացման հեռանկարները» գլխում ներկայացվել են ֆինանսական տեխնոլոգիաների էությունը, սահմանումները տարբեր հեղինակների կողմից, առավելություններն ու հնարավորությունները, ինչպես նաև մարտահրավերները բանկային համակարգի համար: Անդրադարձ է կատարվել ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման փուլերին, ժամանակակից լուծումներին: Բանկային համակարգի համար վեր են հանվել մի շարք ուղղությունների համար իրենց բնորոշ մարտահրավերները և խոչընդոտները: **Այստեղ հեղինակը փորձել է նախադրյալներ ձևավորել գիտական նորույթի երրորդ կետի ներկայացման համար:**

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինտեխի միջազգային փորձի վերլուծություն» գլխում անդրադարձ է կատարվել միջազգային բանկային համակարգերում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացմանը, արդի վիճակին, ինչպես նաև ՀՀ բանկային համակարում վերջիններիս զարգացման առանձնահատկություններին:

Ուսումնասիրվել են միջազգային ցուցանիշներ, տեխնոլոգիաները և այլն: Առանձնակի ուշադրություն է դարձվել այն երկրներին, որոնք աչքի են ընկնում նորագույն թվային ֆինանսական ծառայությունների ներդրմամբ և կիրառությամբ:

Կարևորելով բաց բանկային գործունեության ներդրումը ՀՀ-ում՝ հետազոտվել են դրա ներդրումը և կիրառությունը տարբեր երկրներում՝ Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Սինգապուր, Հոնգ Կոնգ, ԱՄՆ, Վրաստան: Դուրս հանելով դրա ներդրման հիմնախնդիրները հեղինակը ներկայացնում է որպես **գիտական նորույթի հինգերորդ կետ բերված մոտեցումը՝ առաջարկելով բաց բանկային գործունեության համակարգի ներդրման փորձնական մոտեցում և երեք փուլերից կազմված ալգորիթմային կառուցվածք:**

Ատենախոսության երրորդ՝ «Ֆինտեխ միջավայրը ՀՀ-ում և դրա զարգացման հեռանկարները» գլխում ներկայացվել են ՀՀ ֆինանսական տեխնոլոգիաների միջավայրը ձևավորող թվային լուծումները, հաշվարկվել է ՀՀ բանկային համակարգի

թվային ֆինանսական ծառայությունների զարգացման մակարդակը, անդրադարձ է կատարվել յուրաքանչյուր լուծմանը, վեր են հանվել ներդրման և զարգացման հիմնախնդիրները ֆինանսական տեխնոլոգիաների նշված ուղղությունների համար:

Դիտարկվել են տարբեր թվային լուծումներ, որոնք արդեն իսկ առկա են շուկայում կամ դեռևս ներդրված չեն, ինչպես նաև այնպիսիք, որոնք վերջերս են ներդրվել, մասնավորապես՝ «Գնիր հիմա, վճարիր հետո», Կենսաչափական նույնականացման տեխնոլոգիաների կիրառությունը, Բաց բանկային գործունեությունը, և այլն:

Արժեքավոր ուսումնասիրություն է կատարվել տարբեր ինդեքսների բնագավառում՝ կապված թվայնացման աստիճանը որոշելու հետ, ինչպիսիք են՝ Թվային պատրաստվածության ինդեքսը (Digital Readiness Index), Նորարարության համաշխարհային ինդեքսը (Global Innovation Index), Ֆինտեխ համաշխարհային ինդեքս 2020-ը (The Global Fintech Index 2020): ՀՀ-ն առաջին երկու ինդեքսների դասակարգման մեջ զբաղեցնում է միջին ցուցանիշներ, իսկ 3-րդ ինդեքսը ՀՀ-ի համար հաշվարկված չէ: **Արդյունքում ձևավորվել է որպես գիտական նորույթի առաջին կետ ներկայացվող մոտեցումը, որտեղ հեղինակը դուրս է բերել ընդհանրական ցուցիչ՝ տալով ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման ընդհանուր գնահատականը:**

Ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման մակարդակի վրա ուղղակի և անուղղակի ներգործությամբ մասնակի ցուցանիշների ընդգրկմամբ հեղինակը կատարել է ընդհանրական ցուցիչների կառուցում՝ **դրանով հիմնավորելով իր ատենախոսության գիտական նորույթի երկրորդ կետը:**

Ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման հիմնախնդիրները հետազոտելիս հեղինակը հիմնավորում և ամբողջացնում է **գիտական նորույթի երրորդ կետում բերված մոտեցումը՝ մատնանշելով ՀՀ բանկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման տարբեր բնույթի մարտահրավերներ, խոչընդոտներ և հիմնախնդիրներ:**

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության **օբյեկտը** ՀՀ առևտրային բանկերն են և ֆինտեխ ընկերությունները, իսկ հետազոտության **առարկան** ֆինանսական տեխնոլոգիաներն են, միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում ՀՀ բանկային համակարգում նորագույն ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման, իսկ արդեն ներդրված ֆինանսական տեխնոլոգիաների դեպքում՝ դրանց զարգացման հիմնախնդիրները:

Ատենախոսության համար տեղեկատվական և տեսամեթոդական հիմք են հանդիսացել մի շարք գիտական աշխատություններ, վերլուծություններ և հաշվետվություններ, ՀՀ բանկերի հրապարակումներ: Կիրառվել են գիտական հետազոտական ավանդական, վիճակագրական և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտություններով ստացվել են գիտական մի շարք արդյունքներ, որոնցից հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացվում են հետևյալները՝

1. Մշակվել է ֆինտեխ զարգացման համաթիվ, որը ներառում է ֆինտեխ զարգացման տարբեր ուղղությունների առանձին գնահատականներ: Դրա կիրառմամբ գնահատվել է ՀՀ-ում ֆինտեխ զարգացման մակարդակը:
2. Հետազոտվել է տարբեր պարամետրերի ազդեցությունը ֆինտեխ զարգացման ներուժի և մակարդակի վրա և վեր են հանվել ֆինտեխի վրա նշանակալի ներգործություն ունեցող մի շարք գործոններ:
3. Վեր են հանվել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացման առանձին մարտահրավերներ, խոչընդոտներ և հիմնախնդիրներ:
4. Հետազոտվել են ՀՀ-ում կենսաչափական նույնականացման առկա խնդիրները, առաջարկվել է կենսաչափական նույնականացման մեթոդական մոտեցում:

5. Առաջարկվել է բաց բանկային գործունեության համակարգի ներդրման փորձնական մոտեցում և երեք փուլերից կազմված ալգորիթմային կառուցվածք:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Գիտական նորույթի առաջին կետի ձևակերպումը կշահեր, եթե հստակեցվեր, թե «տարբեր ուղղություններ» նշելով ինչ զարգացումներ նկատի ունի ատենախոսը, զարգացման մակարդակի բովանդակությունը և չափողականությունը ևս հստակ չեն: Բացի դրանից, «ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում» հասկացությունը ցանկալի կլիներ ներկայացնել՝ շեշտելով, թե այդ համաթիվը ամբողջական պատկեր է տալիս, թե՝ մասնավոր լուծում է:

   Նույն կետում, մեթոդը «գործոնային վերլուծություն» անվանելով ցանկալի կլիներ ավելի հստակ ներկայացնել դրա բնույթը, քանի որ անկախ նրանից, որ համաթվում տարբեր գործոններ են հաշվարկվում, այնուամենայնիվ, ըստ էության, գործոնային վերլուծության դրանք ենթարկված չեն՝ այն իմաստով, որ կատարված չէ առանձին գործոնների փոփոխությունների և վերջնական արդյունքի վրա ազդեցության գնահատում:

2. Առաջարկվող համաթվի հաշվարկման համար ատենախոսը նախ բազմաթիվ (թվով 26) գործոններ է ներկայացնում (ի դեպ՝ ոչ թե հիմնական տեքստում, այլ՝ հավելվածներում), իսկ հետո համաթվում օգտագործվում են դրանցից միայն 10-ը: Մեր կարծիքով հստակեցման կարիք կա՝ ինչպես են նախ ընտրվել 26-ը ապա՝ 10-ը, և մասնավորապես՝ X_{15}, X_{16}, X_{17}, զուտ ֆինանսական բնույթ ունեցող գործոնները դուրս թողնելով համաթվի հաշվարկից՝ արդյոք վերջինիս ֆինանսական-տեղեկատվական արժեքը չի տուժում:

   Միաժամանակ համաթիվը հաշվարկելիս ատենախոսը ընտրված գործոնները կշռում է որոշակի կշիռներով, սակայն որևէ ձևով ներկայացված չէ այդ կշիռների որոշման մոտեցումը: Եթե նույնիսկ այդ կշիռները փորձերի արդյունքում են ստացված, ապա գնահատման կարիք կա՝ արդյոք այդ փորձերը և ընտրանքի ծավալը բավարար է, որպեսզի արդյուքները հնարավոր լինի վերագրել ամբողջ համակցությանը:

3. Ֆինանսական կառավարման համար համաթվի կարևորության տեսանկյունից պետք է նշել, որ հստակ չէ, թե այդ համաթիվը կոնկրետ ինչ է ցույց տալիս, դրա փոփոխությունը ինչ է բնութագրում՝ թե քանակական, թե որակական տեսանկյունից: Մյուս կողմից՝ հաշվարկի հիմքում քանակային ցուցանիշներ են, օրինակ՝ ներկայացվում է մեկ հաճախորդի կողմից մեկ անգամ կատարված գործարքը, բայց բոլորովին հետազոտություն իրականացված չէ, թե այդ գործարքը տվյալ հաճախորդի, ֆինանսական կազմակերպության շրջանառության ինչ բաժինն է ծածկում և ինչ գումարային, ֆինանսական շրջանառության մասին է խոսքը: Այսպիսով, բանկերի ֆինանսական կառավարիչների կամ բնագավառի մակրոկարգավորող մարմինների համար արդյոք այդ տեղեկատվությունը օգտակար է կառավարչական որոշումների կայացման, դրանց վերահսկողության և արդյունքում՝ արդյունավետության գնահատման տեսանկյունից:
4. Ատենախոսության ամբողջ շարադրանքում, նաև սեղմագրում, մեր կարծիքով, կարիք կա «ֆինտեխ» հասկացության հստակեցման, որը, ի դեպ, խիստ առանցքային է ատենախոսության համար: Խոսելով «ֆինտեխի» մասին, նաև տարբեր հեղինակների կարծիքներ դիտարկելով՝ ատենախոսին չի հաջողվել կոնկրետացնել՝ թե խոսքը «Ֆինանսական տեխնոլոգիաներ»-ի կիրառման մասին է, թե կոնկրետ «ֆինտեխ կազմակերպությունների» գործունեության: Վերջիններս, ի դեպ, տվյալ ոլորտում բանկերի մրցակիցներն են, և դրանով ատենախոսը կխուսափեր իմաստային հակասություններից:
5. Խոսելով գիտական նորույթի երրորդ կետում իրավական, կառավարչական, ֆինանսական, մշակութային հենք ունեցող խնդիրների մասին՝ ատենախոսը ըստ էության սահմանափակվել է դրանց թվարկմամբ, կամ առավելագույնը՝ բացահայտմամբ, սակայն որևէ հետազոտություն կամ հեղինակային մոտեցում չի առաջարկում դրանց կոնկրետ լուծման, մեղմման, բարելավման, կատարելագործման ուղղությամբ:
6. Ինչ վերաբերում է գիտական նորույթի չորրորդ և հինգերորդ կետերին՝ կարծում եմ, որ նշված մոտեցումները համաշխարհային միտումներ են, որոնք ավելի շատ վերաբերում են ֆինանսական շուկաներում տեղեկատվական տեխնոլոգիաներին, տվյալների փոխանակման, տեղեկատվության անվտանգության հարցերին և ոչ բուն

ֆինանսական, ֆինանսական կառավարման և նմանատիպ մասնագիտական հիմնախնդիրներին: Այլ հարց է, եթե դրանք հեղինակի կողմից հետազոտվեին բանկային գործունեության մեջ ֆինանսական գործիքների կամ ֆինանսական կառավարման հարցերի լուծումների համատեքստում:

Այդ իմաստով, ատենախոսության նորույթների և առաջարկությունների ընդհանուր գնահատման տեսակետից խիստ սակավ են ֆինանսական գնահատումները, մասնավորապես՝ ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման վրա կատարվող ծախսերի, դրանց հատուցման, այդ ոլորտում կապիտալ ներդրումների, դրանց արդյունավետության գնահատման հետազոտությունները, և այդ իմաստով կարող է տպավորություն ստեղծվել, որ ատենախոսը ֆինանսական տեխնոլոգիաների ներդրումը ինքնանպատակ է ներկայացնում, քանի որ դրան ֆինանսական էֆեկտը պատշաճ գնահատված չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով հանդերձ Գրիգոր Գրիգորյանի **«Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում»** թեմայով ատենախոսությունը կարելի է գնահատել որպես ՀՀ բանկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման հիմնախնդիրների առաջադրում, հետազոտության արդյունքում հեղինակային լուծումների մշակում:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, իսկ հիմնական դրույթները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում, որոնցից մեկը՝ Scopus ինդեքսավորմամբ:

Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը՝ **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտության գծով:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ա. Ա. Հակոբյան**

14 հունիս 2024թ.

Ա. Ա. Հակոբյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

14 հունիս 2024թ.